

636.5

9-28

ՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Գ. ՉՕ. Ր Ս. Խ Չ Յ Օ. Ն

ՀԱՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գործնական ուղեցույց
գյուղատնտեսական խմբակներին

Գ Ր Ս. Կ. Ս.



Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹ. ԳԼԽ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

Յ Ե Ե Վ Ա Ն — 1928

16 JUL 2013

636.5 ^{uV}
9-28

01 OCT 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Կ. ԶԱՐԱԽԶՅԱՆ

ՀԱՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գ ո Ր Ժ ն ա կ ա ն ու ղ ե ց ու յ ց
գյուղասնտեսական խմբակներին

Պ Ր Ա Կ Ա .



1003
11096

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹ. ԳԼԽ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
Յ Ե Ր Ե Վ ա ն — 1 9 2 8

ՏՊԱՐԱՆ Հ Ե Ր Մ Ե Ս
 ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ,
 ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
 ԳՐԱՌԵՊ. 596բ
 ՏԻՐԱԺ 1000.

ՀԱՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎԱՍՈՒՏԻ ԱՌԱՏ ԱՂԲՅՈՒՐ Ե

«Հավերը ամենաւրյա բնակիչներ են»:

Մեր գյուղական տնտեսութեան համար թռչնաբուծութիւնը, մասնավորապես հավաբուծութիւնը, հանդիսանում է լրացուցիչ յեկամուտի աղբյուր, յետե գյուղացի թռչնաբուծը ցույց տա գիտակից վերաբերմունք և անհրաժեշտ խնամք:

Գյուղի ամենափոքր տնտեսութեան մեջ կարելի յե զբաղվել հավաբուծութեամբ: Հավերը բոլոր կլիմայական պայմաններում և գոտիներում ել կարող են զարգանալ: Հավաբուծութեան համար չի պահանջվում՝ լրացուցիչ հողամասեր, առանձին գոմարներ, շենքի ընդարձակում և այլն: Մի ամառվա ընթացքում հեշտութեամբ կարելի յե հավերի թիվը 20—30 անգամ ավելացնել և այդպիսով ստեղծել ոժտնդակ յեկամուտի մի նոր առատ աղբյուր:

Այդ բազմապիսի ոգուտ տվող (միս, ձու, փետուր, ուժեղ պարարտանյութեր, փաստուներ վռչնչացնող) համը այնքան ել պահանջուտ

չե: Հավերն ամենակեր լինելով՝ մեծ հաճույքով ուտում և հեշտությամբ մարսում են՝ սկսած կերակրի մնացորդներից՝ մսից, ամեն տեսակի հատիկներից, վորդերից, միջատներից մինչև բանջարեղենները:

Մեզ մոտ հավը չի տալիս մեծ յեկամուտ: Ինչո՞ւ. վորովհետև այդ փոքրիկ, բայց մեծ ոգուտ տվող թռչունի վրա մենք մինչև որս շատ քիչ ուշադրություն ենք դարձրել: Մեր ամբողջ խնամքը, ուշադրությունն այն է յեղել, վոր մենք առավոտյան և յերեկոյան նրանց մի-մի բուռ կուտ ենք տվել, կեղտոտ տաշտակների կամ պատահած կոտրած ամանի մեջ ջուր ենք լցրել և ապա հավաքել ենք նրանց ձվերը՝ բներից, մտուրի, խոտադեզերի, ցանի (աթարի) ամրոցների տակից և այլն: Այս ամենից հետո զարմանալի չե, վոր մեր հավերը տարեկան ածում են ամենաշատը 50—70 ձու և կշռում են հազիվ մի կիլո: Մինչդեռ հմուտ հավաբույժների տնտեսությունների մեջ ամեն մի հավ տարեկան ածում է 160—200 ձու, իսկ ամերիկական ագարակներում ամեն մի հավից ստանում են 300—330 ձու և ամեն մի հավը կշռում է $3\frac{1}{2}$ —5 և ավելի կիլո:

Ազնվացեղ ձվաբիք և մսացու հավերը յեր-

վընքից չեն թուել ու իջել ամերիկական ագարակները:

Ամերիկական, հոլլանդական, դանիական և այլ յերկրների ագարակների և տնտեսությունների ազնվացեղ կենդանիները՝ մի քանի հարյուր կիլո կշռող խոզերը, որական 3 դուլ կաթ տվող կովերը և մասնավորապես ընտանի թռչուններն արդյունք են պիտության նվաճումների, գյուղացու զիտակից վերաբերմունքի, հետաքրքրության և աշխատասիրության:

Ուրեմն մեզ էլ մեր հերթին պետք է աշխատենք գիտական հիմունքներով կազմակերպել յեզվ վառել մեր սնեստությունը, մասնավորապես քոչնաբուծությունը:

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԳԻՏԵՆԱ ԳՅՈՒՂԱՑԻՆ ՀԱՎԵՐԻՑ ԱՎԵԼԻ ՇԱՏ ԱՐԴՅՈՒՆՔ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Վոչ մի դեպքում չպետք է պահել այնպիսի հավեր, վորոնք քիչ կամ բոլորովին ձու չեն ածում: Այդպիսի հավերից գյուղացին միայն վնաս է ստանում: Տնտեսության համար ավելի շահավետ է ունենալ մի քանի ձվաբեր հավեր, քան թե մի քանի տասնյակ անպետք, գուր խնամք և կեր պահանջող հավեր:

2. Անհրաժեշտ է պարբերաբար կատարել

ձվաբեր և վոչ-ձվաբեր հավերի ընտրությունս՝ Այդ ընտրությունը կարելի յե կատարել թե հավերի արտաքին նշաններից և թե հավի ձվերի քանակից: Ձվաբեր հավերի կատարը վառ կարմիր ե լինում, փետուրները փայլուն, հարթ դասավորված, մարմինը պինդ, հետևի անցքը մեծ և թաց, ուտում ե շատ, փետրափոխ են լինում ուշ (սեպտեմբ.—նոյեմբ. ամիսներին):

3. Ձվաբերության ուժեղ շրջաններում՝ գարնան և ամրան ամիսներին, բոլոր հավերին 4—5 որվա ընթացքում պետք ե ստուգման յենթարկել, պետք ե ճշտել, թե զրանցից տյգ-ժամանակամիջոցում քանիսը և քանի ձու յեն ածել: Հավերի ստուգումը հետևյալ ձևով պիտի կատարել.

Վաղ առավոտյան հավատերն ստուգում ե ձու ունեցող հավերին և այդպիսիներին մինչև ձու ածելը պահում ե հավաքներում, ապա տետրի մեջ արձանագրում ե, թե այսինչ նշան, կամ անուն, կամ համար ունեցող հավն այսինչ որը ձու ածեց: Այդ 4—5 որվա արձանագրություններից կարելի յե պարզ յեզրակացնել, թե վոչ հավը քանի ձու յե ածել: Յեթե հավը ամեն որ ե ձու ածել, ուրեմն այդ հավը ձվաբեր լավ տեսակի յե, յեթե ածել ե 3 ձու—միջակ ձվաբեր ե, իսկ յեթե ածել ե 1—2 կամ բոլորո-

վին չի ածել, ապա պարզ ե, վոր նրա տեղը պետք ե լինի վոչ թե տնտեսության մեջ, այլ խոհանոցում կամ շուկայում:

4. Վորչափ ել հավը ձվաբեր տեսակի լինի, յեթե նրան վատ են խնամում կամ անկանոն են կերակրում, այդպիսի հավը չի կարող մեծ արդյունք տալ:

5. Գարնան և ամրան ամիսներին հավերը շատ ձու յեն ածում, վորովհետև բացի սովորական կերից, վոր նրանք ստանում են հավատերերից, նրանք իրենց հերթին ճարում են նաև այլ կեր՝ միջատներ, վորդեր, կանաչի, կիր և այլն: Ձմրան ամիսներին հավերը զբրկվում են այդ ամենից: Վորպեսզի ձմրան ամիսներին ել հավերը ձու ածեն, պետք ե նրանց բացի սովորական կերից տալ նաև մանրացրած քուսպ, խաշած կարտոֆիլ, մանրացրած ճակընդեղ, կիր և այլն:

6. Հավի կերը չի կարելի գետնին շաղ տալ, այլ անհրաժեշտ ե լցնել հատուկ պատրաստած կերի տաշտակների մեջ: Գետնի վրա թափած կերը կոխկուտվում ե, խառնվում հավերի կղկղանքի հետ և կարող ե շատ վտանգավոր լինել: Մի հիվանդ հավ իր կղկղանքի միջոցով կարող ե վարակել մնացած հավերին:

7. Բների մոտ առանձին արկղների կամ

տաշտակները մեջ անհրաժեշտ է լցնել՝ ծեծած կավիճ, ձվի կճեպ և ավազ, մի այլ անկյունում պետք է կուտակել ոջախի կամ թոնրի մոխիր, վորպեսզի հավերը թավալեն և պորտաբույծ միջատներից ազատվեն:

8. Հավաբուները պետք է մաքուր լինի, պատերը ծեփած, վոր քամի և ցուրտ չանցնի, հատակը դարմանով ծածկած, վորը պետք է հաճախ փոխել և բոլոր թառերը մի հավասարությամբ շինված: Հավաբնի մեջ ել պետք է հատուկ բներ պատրաստել: Այդ բները պետք է գտնվեն հատակից կես մետր բարձրության վրա և մի շարք կազմեն. բները մեջ դնել մի-մի արվեստական ձու. բները հաճախ մաքրել, իսկ ամբողջ հավաբուները տարին մեկ անգամ կրաջրով ախտահանել:

9. Հավերին ջուր պետք է տալ հատուկ աժանների մեջ. ջուրը պետք է լինի միշտ թարմ և մաքուր:

10. Լավ, առողջ ճուտեր ստանալու համար անհրաժեշտ է՝ ա) վորչափ կարելի յե շուտ թուխս նստեցնել, բ) թուխսը նստեցնել հով և հանգիստ տեղում, գ) թուխսի մոտ միշտ դրված պետք է լինի նրա կերը, ջուրը և մի արկը մոխիր մեջը թավալելու և միջատներից ազատվելու համար և դ) թխսկանի տակ դրած ձը-

վերը պետք է լինեն վազորոք ընարված, խոշոր, մաքուր և թարմ (ամենաշատը 2—3 շաբաթվա ամած ձուեր):

11. Անհրաժեշտ է նաև աքաղաղի ընտրություն կատարել: Լավ աքաղաղը շատ մեծ նշանակութուն ունի: Լավ աքաղաղի կատարը վառ կարմիր է, կուրծքն ու մեջքը լայն, կուլի մեջ հաղթող, կայտառ, հաճախ կանչող, վոտնների միջի տարածությունը նմանապես լայն:

12. Յուրաքանչյուր աքաղաղին պետք է տալ վոչ ավելի քան 10—15 հավ:

Հնդաքաղաղին	6—8 հնդկահավ
Արու սագին	5—7 սագ
Արու բաղին	8—10 բաղ

13. Արու թռչունների սեռական ունակությունը տևում է:

Աքաղաղինը	մինչև 4 տարի
Հնդաքաղաղինը	„ 3 „
Արու սագինը	„ 5 „
Արու բաղինը	„ 4 „

14. Թխսկան հավը նստում և ձվերի վրա	21 օր
» բաղը »	» » 29 »
» սագը »	» » 29 »
» հնդկահավը »	» » 28 »

Ի Ն Չ Պ Ե Ս Խ Ն Ա Մ Ե Լ Ճ Ո Ւ Տ Ե Ր Ի Ն

1. Չվերից դուրս յեկած ճուտերին պետք է անմիջապես փոխադրել հասակը փետուրներով ծածկված արկղի կամ դամբյուղի մեջ և յերեսը շորով ծածկել:

2. Թխականի տակի փովածքը (խոտ, դաբման և այլն) պետք է այրել, իսկ բուռնը յեռացրած ջրով լվանալ:

3 Թխականի մաշկի վրա անհրաժեշտ է լվի ծաղիկ ցանել, վորպեսզի նա միջատներով չվարակի իր ճուտերին, տպա նոր ձագերին գնել տակը:

4. Չագերին առաջին օրը կեր չտալ:

5. Յերկրորդ օրը ձագերին պետք է տալ մանրացրած պինդ խաշած ձու, չորացրած սպիտակ հացի մանրուքներ, կաթի մեջ շաղախված գարու ալյուր, իսկ խմելու համար պետք է տալ կաթ կամ մածուռ:

6. Չի կարելի կերը գետնի վրա թափել, այլ պետք է տախտակի վրա ածել:

7. Առաջին շաբաթը ձագերին պետք է կերակրել յերկու ժամը մի անգամ:

8. Չոր կերը ձագերին պաշտպանում է փորհարիքից:

9. Յերկրորդ շաբաթը ձագերին կարելի յե

Յեծած հացահատիկներ՝ կրուպա, մանրացրած յեղինջ, սոխ, սովորական կանաչ խոտ, լոռ, մանրացրած խաշած միս և այլն տալ:

10. Ճուտերին շատ սպասկար է նաև ածուխը, վորը պաշտպանում է նրանց փորհարիքից: Այդ պատճառով ցանկալի յե բնի մոտ ունենալ ածուխի մանրուք:

11. Ճուտերի սեսը վորոշելու համար առաջարկվում են հետևյալ միջոցները.

ա. Յերկու մասով զգուշությամբ բռնում են ճուտի վզի մաշկից և բարձրացնում: Յեթե ճուտը վտտիկները ձգված պահի, ուրեմն այդ ճուտն արլորիկ է, իսկ յեթե վտտիկները գեպի փորիկն և քնշում՝ ուրեմն հովիկ է.

բ. Բռնում են ճուտի վտտիկներից և գլխի վայր կախ են տալիս: Յեթե ճուտը գլուխն ուղղահայաց է պահում՝ արլորիկ է, իսկ յեթե փորձում է պլուխը բարձրացնել գեպի փորիկը՝ հովիկ է:

12. Անհրաժեշտ է արլորիկներին հովիկներից բաժանել, յերբ արլորիկները սկսում են հետամուտ լինել հովիկներին: Վաղաժամ հասունությունը կխանգարի թե հովիկների և թե արլորիկների աճմանը, նրանք թուլակազմ կլինեն և կմնան փոքր:

ՔՈՉՈՒՆՆԵՐԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ
ԽՆԱՄԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հավերբը, ինչպես և մյուս կենդանիներն ութուշունները, յենթակա յեն զանազան հիվանդությունների:

Հաճախ տարափոխիկ հիվանդություններէ պատճառով (ժանտախտ, խոլերա, փորհարիք և այլն). կարճ ժամանակամիջոցում հարյուրներով ու հազարներով հավեր և այլ ընտանի թռչուններ են կոտորվել և այդպիսով հսկայական վրնաս հասցրել մեր գյուղական տնտեսություններին:

Ամեն տեսակ հիվանդության սկզբնադրյուրն է՝

ա. անմաքրությունը,

բ. անկանոն սնունդը և

գ. անհրաժեշտ խնամքի բացակայությունը:

Մեր գյուղական տնտեսություններում թռչունների հիվանդություններն ավելի յեն տարածված և պատճառած ավերածության շափը ավելի մեծ է, վորովհետև դժբախտաբար վերև հիշած նախապայմաններից և վսչ մեկը մեզ մոտ չի կիրառվում:

Գյուղացու սեփական տնտեսությունը, ինչպես և գյուղի հազարավոր թռչուններին

փրկելու համար շատ քիչ բան է պահանջվում: Անհրաժեշտ է՝

ա. հիվանդ թռչուններին անմիջապես առանձնացնել,

բ. ստակած թռչուններին շատ խորը թաղել և կրով ծածկել և

գ. ախտահանել հավաքունն ու բները:

Հիվանդ թռչուններին առանձնացնելը, ստակած թռչուններին թաղելը ընդամենը մի քանի բուլեյի աշխատանք է պահանջում: Ախտահանության համար կպահանջվի ընդամենը 5 կիլո չհանգած կիր, վորի արժեքն է 10 կոպ. կամ 400 գրամ կրեոլին կամ լիզոլ (48—90 կ.). ուրեմն 20 բուլե աշխատելով և ծախսելով 50—90 կոպեկ, զիտակից, իր աշխատանքը գնահատող գյուղացին փրկած կլինի իր մի քանի տասնյակ ուրբի արժեք ունեցող թռչուններին և միևնույն ժամանակ պատճառ չի լինի հարևանների և ամբողջ գյուղի թռչունների վարակման և վոչնչացման:

ՀԻՎԱՆԴ ՔՈՉՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆՆԵՐԸ ՅԵՎ

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հիվանդ թռչունը (հավ, աքաղաղ, ճուռ) իրեն պահում է առանձնացած, հրաժարվում է

կերից կամ ակամայից ե ուտում, գլուխը հա-
ճախ պահում ե թեքի տակ, մերթ ընդ մերթ աշ-
քերը փակում ե, փետուրները ցցված են լինում
ու խուսացած, կատարը և ականջները դուռնաս-
են և կապտացած:

Թռչունների մեջ տարածված հիվանդու-
թյուններն ու հիվանդագին յերևութներն են.

Անկեղեկ ձու, փրը առաջ ե գալիս՝ ա)
կրի պակասությունից և բ) յերբ հավը ճարպա-
կալվում ե.

Առաջին դեպքում պետք ե ամենորյա կերի
հետ խառնել մոտ 4 գրամ կիր. յերկրորդ դեպ-
քում (ճարպակալություն) հավերին տալ պակաս
աննգարարար կեր:

Բնի մեջ ձու չածելը — պատահում ե (և
շատ հաճախ), վոր հավը թողնում ե իր, բունը
և այլ տեղ ե ձու ածում: Պատահական տեղե-
րում ածած ձուն կորչում ե — կաշաղակները,
ագուսկները կամ մկներն են ուտում և այլն:
Դրա պատճառն այն ե, վոր բները շատ կեղտոտ
են լինում և միջատներով լի: Այդպիսի բներում
հավերը խուսափում են նստել: Վորպետի ձվե-
րը չկորչեն և հավերը իրենց բներում ձու ա-
ծեն, պետք ե միշտ բները մաքուր պահել:

Լուծ.— առաջ ե գալիս մրսելուց կամ վը-
չացած (բորբոսնած, թթված) կերից: Լուծի ա-

ռաջն առնելու համար հիվանդ հավին պետք ե
տալ յեփած բրինձի ջուր, — խնկ յեթե բրինձ չկա՝
բոված գարի: Լուծի ժամանակ չի կարելի վոչ
մի դեպքում կանաչ կեր տալ:

Փորկապուրյուն.— առաջ ե գալիս անկա-
նոն և վատ սննդից, մասնավորապես չոր կերից:
Հանձնարարվում ե մաքրել հավի աղիքները խը-
մացնելով 2 թեյի գդալ գերչակի յուղ և կերա-
կրել նրանց կանաչ, ջրալի կերով և մածունով:

Քարացած կամ կրացած վոսնեք.— հիվան-
դությունը վարակիչ ե և առաջ ե գալիս շատ
փոքրիկ միջատների միջոցով: Այդ միջատներն
իրենց բնակությունը հաստատում են թռչուն-
ների վոտները: մաշկի ճեղքվածքներում, այնտեղ
ապրում ու բազմանում են իհաչիվ թռչունի որ-
գանիգմի: Թռչունի վոտներն սկսում են ուռչել,
յեղջրաթաղանթը շերտավորվել և կարծրանալ:
Յեթե անմիջապես միջոցների չզիմենք, վոտնե-
րի ուռուցքն և կարծրացումը այնքան կսաստ-
կանա, վոր թռչունը կդժվարանա նույնիսկ
շարժվել:

Դրա բժշկությունն ե՝ հիվանդ թռչունի
վոտներին քսել կանաչ սապոն և մի յերկու ժա-
մից հետո տաք ջրով և վրձինով մաքրել, վորից
հետո վերցնել թարմ չաղած ճարպ (3 մաս),
շաղախել նավթի հետ (մի մաս) և քսել հիվան-

դի վասներին: Հիվանդ թուշուններին պետք է առանձնացնել և վաքերի վրայից թափված յեղջրաթաղանթի կտորները այրել:

Աղիքների յերիզորդ.—զրանց կարելի չէ տեսնել հիվանդացած հավի կղկղանքների մեջ. փոքրիկ սպիտակ վորդ է: Վարակուժը տարածվում է հիվանդացած թուշունի կղկղանքի, ջրի և բների միջոցով: Յերիզորդով հիվանդ թուշունը քիչ է ուտում, բայց շատ ջուր է խմում և լուծում. թուշունը մերթընդմերթ կտուցը բաց է անում, կարծես կամենում է ինչ վոր բան կուլ տալ. մարմնի ցնցումներ է ունենում, լգարում է և սատկում:

Հիվանդ թուշուններին առանձնացնել. վայրը ախտահանել, կղկղանքները այրել. մի զրամ կարմել և մի զրամ սանտոնին խառնել և բաժանել 10 մասի և ամեն անգամ տալ մեկական մաս, որական 5 անգամ:

Հնդկահավերին և սագերին նույն դեղից տալ կրկնակի չափով: Յերիզորդով հիվանդ թուշուններին կեբրակրել թրչած հացով և հատիկներով որական չորս հինգ անգամ:

Վոսկրի ցարդվածք.— թուշունների վոսկրի կտորվածքները (վոսի, թևի, մասների) հեշտությամբ բժշկվում են: Զարդվածքը բժշկելու համար պետք է նախ՝ դուշուլթյամբ և հմտու-

թյամբ Զարդված մասերը միացնել, բամբակով փաթաթել և ապա Զարդված մասի հաստության համեմատ՝ յերկարությամբ դնել յերկու մասի քաժանված յեղեղ կամ ծառի ճյուղի պատյանը. (ծառի ճյուղը յերկարությամբ ուղիղ կես են անում, միջուկը փորում հանում են, իսկ պատյանը դնում Զարդված վոսկրի վրա, վորը փաթաթված է բամբակով). ապա կտավը թաթախում են լուծած և տաքացրած սոսինձի մեջ և փաթաթում են վոտը: Մինչև սոսինձի չորանալը թուշունին չպետք է թույլ տալ տեղից շարժվել: Յերեք-չորս շաբաթից հետո փաթեթը կարելի չէ քանդել: Քանդելուց առաջ պետք է հավի վոտը վորոշ ժամանակ պահել դոլ ջրի մեջ, վորպեսզի սոսինձը փափկանա և հեշտ պոկվի:

Հավի սլոգ.— Յերեկները թագնվում են պատերի ճեղքվածքներում և մտուրների արանքներում, իսկ գիշերները հարձակվում են թրուշունների վրա և սկսում արյունը ծծել:

Տիզը գեղին գույնի, տանձաձև, փոքրիկ միջատ է: Նա շատ մեծ անհանդուսություն է պատճառում թուշուններին, իսկ ճուռտերը շատ անգամ սատկում են: Տիզերից պաշտպելու համար անհրաժեշտ է քորթում ճեղքվածքներն ու արանքները նավթիկամ յեռացրած ջուր շաղ տալ:

1001
96011



Վոջիլներ յեվ լվեր. — Հավաքներում հարկավոր ե ոչախի կամ թոնրի մոխիր կուտակել, վորպեսզի թոշուները մեջը թավալեն և այդպիսով վոջնչացնեն վոջիլներին ու լվերին: Հավաքուներ պետք ե մաքուր պահել: Լվոտ և վոջոտ հավերի մաշկի վրա հարկավոր ե լվի ծաղիկ ցանել:

Սոլերա. — Շատ տարափոխիկ համաճարակային հիվանդություն ե. խոլերայով հիվանդացած թոշուներն փրկություն չկա: Խոլերայով հիվանդ թոշուների նշաններն են՝ ուժեղ լուծ, արյունախառն գեղին-կանաչ գույնի արտաթորանք: Հիվանդի բերնից հոսում ե վատ հոտ ունեցող հեղուկ, փետուրները ցցված են, թևերը կախ, վոջինչ չի ուտում:

Խոլերայով հիվանդ թոշուներին պետք ե վոջնչացնել, այրելով նրանց դիակները, շենքը և բոլոր վայրերը յենթարկել ուժեղ ախտահանության: Խոլերա կամ ժանտախտ հիվանդությունները նկատվելուն պես՝ անմիջապես հայտնել անասնաբուժին և գյուղխորհրդին:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏԲ Ե ԱԽՏԱՀԱՆԵԼ

Ախտահանության մի քանի միջոցներ կան: Մենք կթվենք մեր գյուղական պայմաններին՝ մատչելի և հնարավոր միջոցները:

Չհանգամ կրի միջոցով. — Վերջնում են չլ հանգամ կիրը և շոգ սալիս հավաքնի ու վարակված վայրերի մեջ և ապա կրի վրա ջուր են ցանում: Կրաջրով սպիտակացնում են հավաքնի պատերը:

Կրեոլինի յեվ լիզոլի միջոցով. — Կրեոլինը և լիզոլը հեղուկ դեղեր են. կարելի յե բոլոր դեղատներից ել ձեռք բերել: Կրեոլինի 100 գրամը արժե 12 կ., լիզոլի 100 գրամը՝ 28 կ.: Վերջնում են 400—600 գրամ կրեոլին կամ լիզոլ (նայած հավաքնի տարածության), խառնում են մի գույլ ջրի մեջ, ապա մեծ վրձինով սրբըսկում հավաքուներն ու վարակված վայրը, բները:

Հավաքնի և վարակված վայրի ախտահանության ժամանակ թոշուներին տեղափոխում են և յերբ ախտահանությունը վերջանում ե ուշենքը չորանում, նոր ապա թոշուներին փոխադրում են իրենց տեղերը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՏԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՇԵՐՔԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

1. Կակմակերպել ըստ արտաքին նշանների հավերի և աքաղաղների ստուգում, այսինքն՝ հասարակության մասնակցությամբ վորջել թոշուների արդյունավետ և անպետք լինելը:

Այդ նպատակի համար քննութեանը մասնակցող անտեսութեանները նախորդ բռնում են քննութեան յենթակա թուշուներին և նստեցնում շարժական հավաքների մեջ:

Գնահատութեան ընթացքում ընտրում են ամենալավ և ամենավատ թուշուներին, յուրաքանչյուրի մասին տալով մանրամասն բացատրութեաններ: (Տես թերթիկ № 1):

Այդ թերթիկները նախորդ պետք է բազմացրած և բաժանված լինեն բոլոր մասնակցողների մեջ:

2. Կազմակերպել հսկողութեան լավ և վատ տեսակի հավերի վրա, պարզել ամեն մի հավի ածած ձվերի տարեկան քանակը: Հաշվառումը կատարել հատուկ ծրագրով (տես տախտակ № 2):

Այսպիսով գյուղատնտեսական խմբակն ապացուցած կլինի մեր միամիտ անտեսուհի-գեղջիկուհիներին, վոր հավերից շատերն անպետք են, վոր անհրաժեշտ է հավերի մեջ ընտրութեան կատարել և պահել միայն ձվաբեր, արգյունք տվող հավեր:

3. Պատրաստել և մատակարարել համապատասխաններին հավերի նոր ձեռի կերի տաշաակներ, ջուր խմելու ամաններ և ստուգիչ բներ: Այդ բոլորը հեշտութեամբ կարելի յե ձմրան ազատ ամիսներին տեղերում պատրաստել:

4. Հրավիրել շրջանային գյուղատնտեսին հավաքածութեանից հասարակական գրույց-գասախոսութեան կազմակերպելու համար. ձեռք բերել թուշուների վերաբերյալ նոր գրականութեան: *)

5. Տեղերում կազմակերպել թուշուբուծական ցուցահանդեսներ, նաև մասնակցել շրջանային ու գավառային նման ցուցահանդեսներին: Ամեն մի մասնակցող պետք է ներկայացնի իր հավերի նկարագիրը (տես տախտ. № 3): Ցուցահանդեսներին պետք է մրցանակաբաշխութեան կատարել հավի ձվաբերութեան և քաշի համար:

6. Տեղական թուշուների տեսակները, նրանց հատկութեանները, առավելութեաններն ու պակասութեանները պարզելու նպատակով՝ կազմակերպել տվյալ շրջանի հավերի և այլ ընտանի թուշուների ուսումնասիրութեան:

Այդ ուսումնասիրութեանը կատարել համաձայն № 4 տախտակի (տես տախտակ № 4):

ԻՆՁ ՊԵՏԲ Ե ՀԻՇԻ ԳՅՈՒՂԱՑԻՆ

1. Թուշուները բոլոր գոտիներումն էլ կարող են զարգանալ:

*) «Հավաքածութեանը և նրա ոգուտները» հրատարակ. Հոգժողկոմատի, դինն է 20 կոպ.:

2. Թռչնաբուծությունը տալիս է տնտեսություններին շատ մեծ սպասւած:

3. Թռչունները պահանջում են խնամք և ուշադրություն:

ա. Թռչունների ձվաբեր տեսակները պետք է ազնվացնել.

ա. Տեղական հավերի միջից ձվաբեր և մընացու տեսակների ընտրությամբ և

բ. Ոտար ոզնվացեղ (հավերի-աքաղաղների) տեսակների խառնուրդի և ձվերի միջոցով:

5. Թռչուններին տրվելիք կերը պետք է լինի միշտ թարմ, մաքուր, չթթված, չբորբոսնած:

6. Ստակած թռչունը յերբեք չթողնել բակի մեջ կամ մի այլ տեղ. ստակածների գիակները խորը թաղել և չհանգամ կրով ծածկել:

7. Չագերին կերակրելու համար նախորոք հավաքել, չորացնել և պահել՝ յեղինջ, մըջյունի ձվեր, բզեզներ և այլն:

8. Չագերի դարգացման համար շատ ոգտակար է կաթը, մածուցը:

9. Հավաբունը պետք է լինի մաքուր տաք, լուսավոր, պատերը սվաղած, հատակը դարմանով կամ ծղնոտով ծածկած:

10. Անմիջապես առանձնացնել հիվանդ հավին:

11. Շտաբթը յերկու անգամ մաքրել հավաբունը և բները:

12. Իիմել շրջանային, զավառային գյուղատնտեսին, հրահանգչին և նրանցից իմանալ, թե ինչպես են պատրաստում նոր ձևի հավաբներ, բներ, շարժական ստուգիչ բներ:

13. Կապ հաստատել գյուղատնտեսական, գյուղյերիտ դպրոցների և խորհրդային տնտեսությունների հետ:

14. Կազմակերպել հավաբուծական արտելներ, կոլլեկտիվներ: Կոլլեկտիվ և արտելային հավաբուծությունը, թռչնաբուծությունը յեռապատկում է տնտեսությունների յեկամուտը:

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Հիշողացու սնտուրյան մեջ գտնվող բուհունների Բանակի, սեսակների յեվ վիձակի մասին

.....դյուղ.....ըրջան

Տնտեսության տիրոջ անուն, ազգանուն, տարիք.....



1. Հավ (տեղական թե ցեղային)

2. Ս ա դ.....

3) Հնդկահավ

4. Բ ա դ.....

5. Տնտեսությունը քանի՞ տարի յե դրադվում թռչնաբուծութամբ.....

6. Քանի՞սն են դնված, յերբ, ումից և ի՞նչ արժեքով.....

7. Քանի՞սն են տնտեսության մեջ զարգացել.....

8. Հատկացված և հատուկ շինք, հավաքուն

9. Կատարվում և ձվաբեր հավերի ձվերի ընտելություն.....

10. Յիթե այո, ի՞նչ ժամանակից.....

11. Թռչուններին ի՞նչով են կերակրում

12. Ամեն մի հավի կերի տարեկան քանակը և արժեքը.....

№ 3.

ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼԻՔ ԹՈՉՈՒՆ-
ՆԵՐԻ Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

..... ԿՅՈՒՂ շրջան
Ներկայացնողի (անուն, ազգանուն, տարիք).....

1. Ց հղ.....
2. Տարիք.....
3. Սեռ.....
4. Յեթն ցիլական չե, նկարագրել տեսքը, փետուրի, վոտնեբրի, կտուցի աչքերի գույնը.....
5. Թուչունի կշիւը.....
6. Վորչափ ձու յե ածել տարվա ընթացքում.....
7. Քանի՞ անգամ թուխս ե նստել.....
8. Վառեկների և աքլորների քանակը.....
9. Ածած ձվի չափը, մոտավոր կշիւը, կեղեվի գույնը, մի ձուն քանի՞ գրամ ե կշռում.....
10. Ի՞նչ հիվանդութիւններով ե տառապել.....
11. Ի՞նչ տեսակի և քանակի կեր ե տրվել.....

Աստագրութիւն.....
«.....» ամիս 192 թիվ

Թույլ նման սրված կերի ամսական որագիւր

ՏԱՂԻ, ԱՄԻՍ	Քուչունի թիվը		Կ Ե Ր Ի Տ Ե Ս Ա Վ Կ Ն Ե Ր				Գումար
	Աքաղաղ	Հավ	Քա- նակ	Ար- ժեք	Քա- նակ	Ար- ժեք	
Հոկտեմբեր							
Նոյեմբեր							
Դեկտեմբեր							
Հունվար							
Փետրվար							
Մարտ							
Ապրիլ							
Մայիս							
Հունիս							
Հուլիս							
Ռգոստոս							
Սեպտեմբեր							

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՎԱԲՈՒԾՈՅՈՒՆԸ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ԾՐԱԳԻՐ

ա. Քանակական ուսումնասիրություն

1. Հավերի և աքաղաղների քանակը _____
2. Ճուտների _____ » _____
3. Բագերի և ճուտների _____ » _____
4. Սագերի և ճուտների _____ » _____
5. Հնդկահավերի և ճուտների _____ » _____

Տեսակների արտաքին նկարագրությունը (փետուրների, կտուցի, կատարի, վոտքերի, աչքերի գույնը)։

բ. Արտադրողականության ուսումնասիրություն

1. Հավերի, աքաղաղների, ճուտների քաշը _____
2. Տարեկան ածած ձվերի _____ քանակը _____
3. Լավ և վատ ձվաբեր հավեր _____ « _____
4. Ձվի կեղևի գույնը _____

գ. Հավերը խնամելու պայմանների ուսումնասիրություն

1. Վորտեղ են հավերը գիշերում, ածում, հավաքուն ունեն թե վոչ _____
2. Ինչո՞վ են կերակրում հավերին, որական քանի անգամ. (ձմեռ-ամառ) _____
3. Ամեն մի հավին միջին թվով վորչնոփ և թնչ տեսակի կեր և արվում _____

4. Թուխը վորտեղ են նստեցնում և քանի՞ ձու յեն դնում տակը. _____
5. Դրած ձվերից քանի՞սն են ձուտ տվել. _____
6. Ճուտերից քանի՞սն են ապրել մինչև աշունք _____
• Ճուտերից քանի՞սն են սատկել և վորո՞նք են պատճառները _____
8. Ինչ են անում սատկած հավի դիակը _____

դ. Թուչնաբուծական մթերքների սպառման ուսումնասիրություն

1. Վորտեղ են սպառվում ձվերը, տեղում թե՞ քաղաքում _____
2. Ու՞մ և ի՞նչ դնով են ծախվում ձվերը _____
3. Գյուղում կան արդյոք թուչնաբուծիչների, մասնավորապես հավաբուծիչների և ձվաբուծիչների արտելներ _____

Յ Ա Ն Կ

1. Հավարտութիւնը յիկամուտի առատ աղբրոյն և.
2. Ի՞նչ պետք է գիտենա գյուղացին հավիրից ափլի շատ արդյունք ստանալու համար:
3. Ի՞նչպես խնամիլ ճուտերին.
4. Թռչունների հիվանդութիւնները և խնամքը
5. Հիվանդ թռչունների նշանները և հիվանդութիւնները
6. Ինչպէս պետք է ախտահանիլ
7. Գյուղատնտեսակ. խմբակի հերթական աշխատանքները
8. Ի՞նչ պետք է հիշի գյուղացին.

Գյուղասնեսակ. խմբակի գրադարանի համար պատրասվում է

1. Անասնապահութ. դործն. ուղեց. գյուղատ. խմբ. համ.
2. Կաթնատնտեսութ. » » » » »
3. Բանջարաբուծութ. » » » » »
4. Շերամապահութ. » » » » »
5. Պտղաբուծութ. » » » » »
6. Յերկրագործութ. » » » » »

« Ազգային գրադարան



NL0298026

62
22.528

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.